№ 5 Շաբաթ Յունվարի 17 — 1887 — Շաբաթ Յունվարի 17 № 5

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ՆԵՐԿԱՑ 1887 ԹՒԻՆ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնակայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը։)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիւղական կեանքի ուսումնասիրութիւնը.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց Թատրօն. Նամակ Նուխուց. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զինուորական օրինագիծը և Իշխան Բիսմարկի ճառը. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ծայրեր.

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

—

„Вѣстникъ Европы“ ամսագրի անցեալ դեկտեմբերի տետրակում ռուսաց անխոնջ գրող Շչեդրին դարձեալ ներկայացրել է ընթերցող հասարակութեանը ուշադրութեան արժանի յօդուածների մի շարք։ Շչեդրինի գրչի անսպառելի հանճարը գտնում է միշտ և անդադար իր ստեղծագործութիւնների համար ոչ թէ միայն նոր, վերին աստիճանի հետաքրքիր և կենդանի նիւթեր հասարակական կեանքից, բայց և կարողանում է միշտ նոր և գրաւիչ դեղարուեստական ձևեր գտնել իր այդ ստեղծագործութիւնների համար։ Շչեդրին արդէն ծերութեան հասակին հասած, նրա հանճարի ոյժը ոչ թէ միայն չէ սպառվում, չէ յետադիմում, բայց մինչև անգամ մաղի չափ չէ թառամում։ Ընդհակառակն, կարծես ամեն մի նոր հեղինակութեան մէջ այդ հանճարը աւելի ուժեղ, աւելի թարմ է դառնում։

Ռուս հեղինակի դիտողութեան այդ ընդունակութիւնը զարմացման արժանի է։ Շչեդրինի գրուածները կարդալով մենք աւելի և աւելի ենք համոզվում որ մի որ և է հասարակական շրջան ձիգութեամբ դիտելու, նրա բոլոր հասարակական կեանքի երևոյթները մանրակրկիտ կերպով ուսումնասիրելու համար՝ հարկաւոր է նոյն շրջանից բարձր լինել....

Վերցնենք գիւղական շրջանը թէ Ռուսաստանում և թէ մեզանում։ այդ շրջանի մէջ մշտապէս ապրում են նոյն շրջանի անդամ կազմող անձինք, շրջանի կեանքի հետ լաւ ծանօթ մարդիկ,—բայց նրանք անընդունակ են դիտելու, ուսումնասիրելու և գրական ստեղծագործութեան վերածելու իրանց շրջապատող այն բոլոր առօրեայ և իրանց լաւ ծանօթ երևոյթներն ու հանգամանքները, որոնց կարողանում է դիտել, ուսումնասիրել, որոնց գեղարուեստական, գրական ամբողջացրած կերպարանք կարող է տալ այդ շրջանից իր կրթութեամբ, իր մտաւոր զարգացմամբ աւելի բարձր աստիճանի վրա կանգնած մարդը, այդ շրջանին բոլորովին օտար մարդ, ինտելիգենցիային պատկանող մի անհատ։

Այդ երևոյթը կրկնվում է ամեն տեղ։ Նոյնը կարող ենք ասել և մեր հայոց գիւղական շրջանի վերաբերմամբ. նրա մէջ ապրողները, նոյն իսկ գիւղական շրջանի անդամները անընդունակ են նկատել, դիտել, ուսումնասիրել գիւղական կեանքի մէջ այն, ինչ որ կը նկատեր, կը դիտեր և կուսումնասիրեր շինականների շրջանից իր զարգացմամբ բարձր մի ինտելիգէնտ անհատ....

Ցանկանալ մեզ համար մի Շչեդրին,— ցնորք կը լիներ. բայց ցանկալի է որ մեր գիւղական կեանքով հետաքրքրվողները ծանօթանային Շչեդրինի՝ դիտելու, ուսումնասիրելու և գրելու մեթոդայի հետ և աշխատէին հետևել նրա օրինակին մեր գիւղական կեանքի ուսումնասիրութեան և հետազօտութեան գործում։

„Вѣстникъ Европы“ ամսագրի դեկտեմբերի տետրակում Շչեդրին զետեղել է „Мелочи Жизни“ ընդհանուր վերնագրով ռուսաց գիւղական կեանքից վերցրած գեղարուեստական էտիւդների մի շարք, որոնք բացի գրական, բուն գեղարուեստական արժանաւորութիւններից, պարունակում են իրանց մէջ ռուսաց գիւղական կեանքի և տնտեսական լուրջ ուսումնասիրութիւնը։ Այդ էտիւդները համ մի լաւ գրած վէպի պէս թեթև և ախորժելի կերպով են կարդացվում, համ էլ ներկայացնում են գիւղական կեանքի ուսումնասիրութեան ձևի օրինակներ։ Մի երեկոյ նրան կանչեցին դուռը։ Մի անայտ երիտասարդ իր հետ բերած լապտերի լոյսով ցոյց տուեց նրան իր ձախ ձեռքի ճկոյթը, որ փաթաթած էր մի սպիտակ թաշկինակում, որ կապած էր նրա վզից։ Ցոյց տալով կուչ եկած ճկոյթի վրա մեծ խոր վէրքը, անծանօթին ասաց.

—Տղաղ է կծել։ Բժիշկներն ասում են թէ պէտք է ճկոյթս կտրվի։ Ես ուզում եմ գանգատվել. չորս վկայ ունեմ, որոնք խլել են նրա ձեռքից ատրճանակը, երբ ուզում էր ինձ վրա պարպել։

Ամանը չը զարմացաւ, մինչև անգամ չուզեց իմանալ թէ ով է նա և ինչպէս է եղել այդ դէպքը։ Նա վաղուց սովորել էր այդ տեսակ անակնկալ համբաւներին. միայն երկու տարի էր նրա ականջը հանգստացել, այժմ այդ երկու տարին էլ մոռացաւ։

Նա ասաց անծանօթին ցած աղերսական ձայնով.

—Փչանայ Աստուածատուրը.... ինչ կը լիներ թէ նրա մահվան լուրը բերէիր։ Աստուծու սէրին, այդ բանը մի տարածիր քաղաքում։ Ես էլ մի մարդ եմ, հինգ տասն մարդ ինձ ճանաչում է։ Ես կը վարձատրեմ քեզ։

Ամանը մոռաւ տուն, կնոջից ստացաւ երկու տասանոց և տալով անծանօթին, կրկին էլի խնդրեց, աղաչեց որ չը գանգատվի։ Նա խօսք տուեց ու գնաց։

Աստուածատուրի հետ հօր բացատրութիւնները մի հետևանք չունեցան։ Որդին արդէն առաջվայ անամօթութեամբ էր պատասխանում. և երբեմն հայրը վախում էր նրա բոցավառ աչքերից, որոնք հայտնում էին թէ այդ որդին կարող է և հօր մատը կծել, եթէ չը թողնեն ատրճանակը իր ձեռքում։ Դրսում վատ լուրեր շատ էր լսում Ամանը. Աստուածատուրը ամբողջ օրերով անյայտանում էր։ Ցանեցիք արդէն դիտէին, որ նա գինետներում թղթախաղով է զբաղված։

Երեք երեկոյ և երեք առաւօտ, աշխատանքից յետ դառնալուց յետոյ և աշխատանքի գնալուց առաջ, Ամանը խորհուրդ էր անում իր կնոջ հետ, հասկացնում էր որ իրանք խայտառակվում են, որ պէտք է նրան շուտով խելքի բերել։ Կինը յայտնեց որ ժամանակ է նրան «տանով անելու»։

«Տանով անելու» հարցը երկար չը տևեց։ Ամանի կինը կարծես մի քանի ամիս առաջ էր կազմել իր ծրագիրը, որը այժմ մեծ հմտութեամբ և համոզիչ խօսքերով բաց արաւ ամուսնու առաջ։ Ամանը դրանից աւել մի լաւ բան հնարել չէր կարող. նա ուրախացաւ և հաստատեց այդ ծրագիրը, յորդորեց որքան կարելի է շուտով գործադրել։

—Խայտառակվելուց յետոյ հաղար այդպիսի մտքեր լինեն, ոչինչ, ասաց Ամանը,—ես հաւատում եմ որ միայն դա կարող է նրան տուն բերել։

Միամիտ կաց, հանգստացրեց կինը,—Շուշին չի քանդվիլ խօ, որ չը կարողանաք այդ բանը իսկոյն գլուխ բերել։ Մեզ համար ինչ կայ. հէնց այսօր թող լինի։ Հազարները կաղաչեն, կը պատեն։

—Ի հարկէ, հաստատեց այդ խօսքերը Ամանը և հանդիստ իր գործին գնաց։

III

Օրը կիրակի էր։

Սոֆին մենակ նստած էր իրանց քուրսու տակ, անթարթ աչքերով նայում էր տան միայնակ պատուհանին։ Դա մի փոքրիկ քառանկիւնի ծակ էր հարաւային պատի մէջ շինած, առանց շրջանակների. երեք-կոլոր երկաթի ձողեր պաշտպանում էին տունը արտաքին թշնամիներից. իսկ ձմեռվայ ցրտերից պաշտպանում էին երեք թերթ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԱՅՐԵՐ

II

Երկու տարի Բաղուում մնալուց յետոյ Աստուածատուրը տուն էր յետ դառնալ։ Մեկը-միմիայն Ամանը, որ մեզ յայտնի կուլից յետոյ հարկադրել էր որդուն «կորչել գնալ» ուր որ ուզում է, այժմ ուրախ էր, տեսնելով որ Աստուածատուրը առաջվանի պէս չէ երևում, այլ հանդարտ է ու խոնարհ, աւելի մաքուր հագնված։ Նրան մանաւանդ շատ ուրախացնում էին երկու բան,—մի նոր պսպղուն սամովար, որ որդու կարգադրութեամբ յաճախ էր եռ գալիս, և մի հասարակ կարմիր մնդուկ, որի բանալին միշտ գտնվում էր Աստուածատուրի մօտ։ Մնդուկը շատ էր հետաքրքրում բոլոր տանեցիներին։ Մէջը ինչ կայ։ Ոչ ոք չը գիտէր։ Եւ այնու ամենայնիւ բոլորին մի կերպ յափշտակութիւն էր տիրում, երբ Աստուածատուրը մի մի բաց էր անում մնդուկը, մինչև կէսը մտնում էր նրա մէջ և սկսում էր քրքրել այնտեղ եղած իրերը։

Անցան շաբաթներ, բայց մնդուկի մէջ պարունակվածը ոչնչին յայտնի չեղաւ։ Մի անգամ միայն Ամանի կինը դողալով հանել էր քնած որդու գրպանից բանալին, բացել էր մնդուկը, բայց ահից այնքան չփոթվել էր, որ համարեա ոչինչ չէր տեսել։

—Թղթեր կային, մի քանի շորեր, կարծեմ մի նոր արխալուղ, պատասխանում էր նա իր մարդին ամեն անգամ, երբ խօսք էր սկսվում մնդուկի մասին։

—Չէ, փող երևի ունի, ասում էր Ամանը խորին համոզմունքով գլուխը շարժելով և ծանր ծանրը նայելով կնոջ դէմքին։ Ունի, եթէ չունենայ, ինչ տեղից է գտել այս։

Եւ ամանը մատով ցոյց էր տալիս իր կրծքի վրա այն ուղղութիւնը, որով ընկած էր լինում Աստուածատուրի ժամացոյցի բարակ արծաթէ շղթան։

Խորհրդաւոր մնդուկը այնպէս էլ անքննելի մընաց։

Իրաւ է, Աստուածատուրը տան համար ծախս չէր անում, բայց ով կասէր թէ եթէ այդպէս էր, ուրեմն նա փող էլ չունէր։ Ամանը «վերջին աղքատը չէր», ինչպէս ինքն էր ասում։ Լինելով լաւ հիւսն և պահեցող հայր, նա մի երեք հարիւրանոց դումար էր կազմել և այդ պատճառով ունևոր թաղեցիներից մէկն էր համարվում։ Նա չէր էլ ուզի որդուց պահանջել որ ծախս անէ իր գրպանից։ Արդէն բաւական էր, որ այդ որդին առաջվանը չէ և հօրը այնքան սրտնեղութիւն չէ պատճառում։

Բայց թիսկ որ Աստուածատուրը առաջվանը չէր։ Մի կարճ ժամանակում այդ հարցը պարզ դառաւ տանեցիների համար։

Աստուածատուրը սկսել էր երկար բացակայ լինել տանից, երբեմն և գիշերները ուրիշ տեղ անցկացնել։ Երբեմն երեկոները ինչ որ մարդիկ գալիս էին նրան դուրս կանչում։ Նա գնում էր մի խօսք չասելով և վերադառնում էր կէս գիշերին և դրանից էլ յետոյ։ Հայրը հարցնում էր զբնացած տեղի անունը, ուշ գալու պատճառը, բայց այնպիսի բարկացած պատասխաններ էր ստանում, որ լռելը ամենից ձեռնտու էր համարում։ Այսպէս շարունակվելով, Բաղուից գալուց երրորդ ամիսը ժամացոյցը անյայտացաւ Աստուածատուրի ծոցից։ Թէև նա հաւատացնում էր թէ տուել է ժամագործին չինելու, բայց Ամանը մի ինչ որ պատճառով անհանգիստ էր։

Մի երեկոյ նրան կանչեցին դուռը։ Մի անայտ երիտասարդ իր հետ բերած լապտերի լոյսով ցոյց տուեց նրան իր ձախ ձեռքի ճկոյթը, որ փաթաթած էր մի սպիտակ թաշկինակում, որ կապած էր նրա վզից։ Ցոյց տալով կուչ եկած ճկոյթի վրա մեծ խոր վէրքը, անծանօթին ասաց.

—Տղաղ է կծել։ Բժիշկներն ասում են թէ պէտք է ճկոյթս կտրվի։ Ես ուզում եմ գանգատվել. չորս վկայ ունեմ, որոնք խլել են նրա ձեռքից ատրճանակը, երբ ուզում էր ինձ վրա պարպել։

Ամանը չը զարմացաւ, մինչև անգամ չուզեց իմանալ թէ ով է նա և ինչպէս է եղել այդ դէպքը։ Նա վաղուց սովորել էր այդ տեսակ անակնկալ համբաւներին. միայն երկու տարի էր նրա ականջը հանգստացել, այժմ այդ երկու տարին էլ մոռացաւ։

Նա ասաց անծանօթին ցած աղերսական ձայնով.

—Փչանայ Աստուածատուրը.... ինչ կը լիներ թէ նրա մահվան լուրը բերէիր։ Աստուծու սէրին, այդ բանը մի տարածիր քաղաքում։ Ես էլ մի մարդ եմ, հինգ տասն մարդ ինձ ճանաչում է։ Ես կը վարձատրեմ քեզ։

Ամանը մոռաւ տուն, կնոջից ստացաւ երկու տասանոց և տալով անծանօթին, կրկին էլի խնդրեց, աղաչեց որ չը գանգատվի։ Նա խօսք տուեց ու գնաց։

Աստուածատուրի հետ հօր բացատրութիւնները մի հետևանք չունեցան։ Որդին արդէն առաջվայ անամօթութեամբ էր պատասխանում. և երբեմն հայրը վախում էր նրա բոցավառ աչքերից, որոնք հայտնում էին թէ այդ որդին կարող է և հօր մատը կծել, եթէ չը թողնեն ատրճանակը իր ձեռքում։ Դրսում վատ լուրեր շատ էր լսում Ամանը. Աստուածատուրը ամբողջ օրերով անյայտանում էր։ Ցանեցիք արդէն դիտէին, որ նա գինետներում թղթախաղով է զբաղված։

Երեք երեկոյ և երեք առաւօտ, աշխատանքից յետ դառնալուց յետոյ և աշխատանքի գնալուց առաջ, Ամանը խորհուրդ էր անում իր կնոջ հետ, հասկացնում էր որ իրանք խայտառակվում են, որ պէտք է նրան շուտով խելքի բերել։ Կինը յայտնեց որ ժամանակ է նրան «տանով անելու»։

«Տանով անելու» հարցը երկար չը տևեց։ Ամանի կինը կարծես մի քանի ամիս առաջ էր կազմել իր ծրագիրը, որը այժմ մեծ հմտութեամբ և համոզիչ խօսքերով բաց արաւ ամուսնու առաջ։ Ամանը դրանից աւել մի լաւ բան հնարել չէր կարող. նա ուրախացաւ և հաստատեց այդ ծրագիրը, յորդորեց որքան կարելի է շուտով գործադրել։

—Խայտառակվելուց յետոյ հաղար այդպիսի մտքեր լինեն, ոչինչ, ասաց Ամանը,—ես հաւատում եմ որ միայն դա կարող է նրան տուն բերել։

Միամիտ կաց, հանգստացրեց կինը,—Շուշին չի քանդվիլ խօ, որ չը կարողանաք այդ բանը իսկոյն գլուխ բերել։ Մեզ համար ինչ կայ. հէնց այսօր թող լինի։ Հազարները կաղաչեն, կը պատեն։

—Ի հարկէ, հաստատեց այդ խօսքերը Ամանը և հանդիստ իր գործին գնաց։

III

Օրը կիրակի էր։

Սոֆին մենակ նստած էր իրանց քուրսու տակ, անթարթ աչքերով նայում էր տան միայնակ պատուհանին։ Դա մի փոքրիկ քառանկիւնի ծակ էր հարաւային պատի մէջ շինած, առանց շրջանակների. երեք-կոլոր երկաթի ձողեր պաշտպանում էին տունը արտաքին թշնամիներից. իսկ ձմեռվայ ցրտերից պաշտպանում էին երեք թերթ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Ամենալաւ տրամադրութեան տակ հեռացաւ թատրոնից այն հնչին թւով հասարակութիւնը, որ ներկայ էր վերջին՝ հինգշաբթի օրվան ներկայացման։ Եւ ճշմարիտ, այս ներկայացումը պէտք է ամբողջ սեզօնի ամենայաջողվածը համարել, նախ՝ պիէսայի ընտրողութեան կողմից, երկրորդ դերասանների ամենաներդաշնակ խաղի կողմից։ Ներկայացնում էին պ. Սունդուկեանցի «Էլի մէկ զոհ» կօմեդիան։ Երբ 1881 թ-ին մշտական խումբը առաջին անգամ նրան ներկայացրեց, թերթիս խմբագիրը մանրամասնաբար քննել էր թէ կօմեդիան և թէ նրա մէջ եղած տիպերը (տես «Մշակ» № 19, 1881 թ.)։ Դրանից յետոյ «Էլի մէկ զոհի» վերջին մասը ենթարկվել է նորից փոփոխութեան։ Ութսուն ու մէկ թւականին Սունդուկեանցի հերոսուհի՝ Անանին յանկարծակի մեռնում է։ Այդ անակնկալ մահը միանգամից կտրում է հեղինակի ձեռքով կապած գորդեան հանգոյցը, անլուծելի թողնելով պիէսայի յարուցված կենսական հարցը։ Սունդուկեանցի նման հետևողական (послѣдовательный) բէալիստի էսթէտիական և գեղարուեստական զգացմունքները բաւականութիւն չը պէտք է զգային մի այդպիսի վախճանից. պէտք էր փնտռել մի ուրիշ ելք և պ. Սունդուկեանց այդ ելքը այժմ գտել է։ Անանին չը կարողանալով այլ ևս մարմնչել, ընկճվում է և ստիպվում է իրան զոհել ծնողաց կամքին և համաձայնվել պսակվելու Բրիլիանտովի հետ։ Եւ այդ շատ հասկանալի է։ Անանին ծնված օրից մօր ներգործութեան տակն է. այդ ներգործութիւնը ամուր արմատներ է ձգել նրա մէջ։ Միքայէլը իր վերացական գաղափարներով առժամանակ կարող էր գրաւել ու հրապուրել նրան, կարող էր մինչև անգամ նրա մէջ զարգացնել կամքի նշոյլներ։ Բայց բաւական կը լինէր նրանց ընդդիմադրել մօր հաստատ կամքին, որպէս զի այդ բոլորը փոշու նման անհետանար.... Քանի որ կօմեդիայի միւս մասերը մնացել են անփոփոխ, այդ պատճառով նրանց վրա նոր բան ասելու ոչինչ չը կայ։

Ինչպէս վերևում յիշեցինք, ներկայացումն անցաւ շատ յաջող կերպով։ Այս ներկայացումը շատ լաւ ապացոյց է, թէ որքան լաւ կանցնէին մեր ներկայացումները եթէ բեմերտուարը համապատասխանէր ներկայ խմբի մեծամասնութեան ոյժերին։ Ուրիշ անգամ բոլոր մասնակցողները միայն մի շրջանակ, ակսեսուարի մի մասն են կազմում պ. Աղամեանի համար։ Բայց այս երեկոյ ամեն մի դերասան իր ոյժերին և հասկացողութեան համապատասխան դեր ունէր, այդ պատճառով իւրաքանչիւրը երևում էր, որ սիրով էր վերաբերվել դէպի իր դերը և ուսումնասիրել էր նրան։ Պ. Աւալեան մեր «Титъ Титычъ» Սարգսի դերում, պ. Զմչկեան կնոջ «կօշիկների տակ» գտնվող Սուրաթովի դերում, պ. Աբելեան երևակայական աշխարհում ապրող Միքայէլի դերում, տ. Գոհարիկ Անանիի դերում, տ. Սաթինիկ-Զմչկեան (Սալօմէ), տ. Շամիրամ (Բարբարէ), պ. Պարոն-Սարգսեան (Վանօ), պ. Տէր-Դաւթեան (Օսէփ) և օր. Վարդուհի (Նատօ)—ամենքն էլ իրանց դերումն էին և բոլորն էլ գեղեցիկ կերպով էին խաղում։

Պ. Աղամեան «Էլի մէկ զոհից» յետոյ Շիլլերի «Աւազակներից» ներկայացրեց մի կտոր։ Այդպիսի կտորներ մի «Ֆէյերվէրկի» նշանակութիւն ունեն։ Ցանկարծ փայլուն կերպով վառվում են և հանդչում առանց երկարատև ներգործութիւն ունենալու հանդիսականի վրա։

Ներկայացումը վերջացաւ ժամի 1-ին, պատճառ որ անտրակտները շատ երկար էին։ Ցանկալի էր այդքան երկար չը լինէին։

Nemo

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՅ

Յունվարի 3-ին

Անցեալ դեկտեմբեր ամսի 31-ին, կաղանդի երեկոյեան, Նովսու հայոց Մարիամեան օրիորդաց ուսումնարանում պատրաստված էր տօնածառ, նոյն ուսումնարանի ուսուցչական խմբի ջանքով։ Ներկայ էին բոլոր աշակերտուհիները։ Առանձին հրաւիրատոմսերով հրաւիրված էին և ուսումնարանի հոգաբարձուներն ու հարուստ աշակերտուհիների ծնողները. երկու սեռի հիւրերի թիւը վաթսունից աւելի չէր։ Աղօթքահամ թէյից յետոյ սկսվեց հանդէսը։ Աշակերտուհիները իրանց վարժուհու առաջնորդութեամբ զոյգ զոյգ մտան տօնածառի սենեակը։ Երգվեցան քանի մի երգեր, կարդացվեցան քանի մի ոտանաւորներ. իսկ այնուհետև ուսուցիչներից մին առաջարկեց քանի մի հանելուկներ, որ անմիջապէս վճռում էին աշակերտուհիները և ստանում էին սեղանի վրա դարսած ընծաներից մի մի հատ։ Մի բան որ մեզ շատ զարմացրեց, այդ այն էր, որ ոտանաւոր կարդացողները և հանելուկ լուծողները բացառապէս հարուստ պարոնների դուստրները կամ ազգականներն էին։ Մթթէ իսկապէս ուսումնարանի առաջադէմ և սրամիտ աշակերտուհիները միայն դորանք էին։ Այդ էլ մի հանելուկ է, որի լուծումը կը ցանկանայինք լսել հէնց նոյն իսկ հանելուկ առաջարկողներից։

Նուիրաբաշխութիւնից յետոյ տիկինները և պարոնները հրաւիրվեցան մի այլ սենեակ, ուր պատրաստված էր քաղցրեղէնների ճոխ սեղան։ Հաղիւ սկսել էին, ինչպէս ասում են, քաղցրեղէնների «համը տեսնել», պարոններից մէկը սկսեց պատեցնել հանդանակութեան թաբախը։ Անմիջապէս ժողովվեցաւ մօտաւորապէս 40 րուբլի, որ հանդիսի ծախսից հաղիւ քանի մի րուբլիով անցնում էր։ Հանդանակութեան ժամանակ միջանցքում (կօրրիդօրում) նուագում էր ասիական հուչակաւոր զուռնան։ Հիւրերը նախկին սենեակը վերադառնալուց յետոյ, օրիորդները պարեցին քանի մի պարեր, ապա երգվեցան դարձեալ քանի մի երգեր, կարդացվեցան ոտանաւորներ և զուռնայի եղանակով ցրվեցան հիւրերը, տանելով իրանց նուիրառու զաւակներին։ Դուրս եկան և նուիրաբերուկ օրիորդները, որոնց սպասում էին դրսում, իրանց ձեռքներին փչելով, նրանց աղքատ հայրերը կամ այրի մայրերը։

Հիւր

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 15 յունվարի

Շնորհակալութիւն յայտնելով պ. Դ. Ն-ի յօդուածի սկզբնական տողերի համար, որտեղ նա նորերումս հրատարակած հետազօտական յօդուածներիս մի կարճառօտ գնահատութիւն է անում, կարող եմ հաւաստիացնել պ. Դ. Ն-ին, որ նրա մի քանի տարակուսանքները ինքն ըստ ինքեան կը փարատվեն, երբ իմ յօդուածների շարունակութիւնը կը տպագրվի։ Այն ժամանակ ընթերցողը ևս կը համոզվի, որ իմ աշխատանքի այդ երկրորդ մասում, կարդացած Գիւղատ. ընկեր. 30 դեկտեմբերի նիստում, նախատեսած եմ շատ աւելի ընդդիմախօսութիւններ, քան այդ փորձած է անել պ. Դ. Ն., որի նկատողութիւնները, սակայն, ես ամենայն պատկառանքով կարդացի։ Դէպքից օգտվում եմ յայտնելու համար, որ ես ինքս, առանց նախագգուշացած լինելու որ և իցէ կողմից, աշխատութեանս երկրորդ մասում, ընդունած եմ ցորենի գործածութեան միջին չափը մի հոգու համար ոչ թէ 5, այլ $12^1/_2$ պուդ։ Հինգ պուդ ես ընդունել էի միմիայն քաղաքացիների համար, և այդ թուից ես երբէք չէի օգտված եղրակացութիւններ դուրս բերելու համար, թէ ուրեմն որքան ցորենի պէտք ունի մեր Անդրկովկասեան երկիրը, ինչպէս այդ անում է պ. Դ. Ն։

Պ. Դ. Ն., որպէս և բոլորքեանք, շատ է զբաղվում այն հարցով, թէ արդեօք ցորենի արտահանումը պիտի պակասի թէ ոչ և որպէս բոլորքեանք վճռում են այդ հարցը բացասական մտքով։ Եթէ խնդիրը պարզելու տեսակէտից իմ աշխատութեան այդ երկրորդ մասը, կարդացած դեկտեմբերի 30-ին, ունի դրական արժանաւորութիւններ, նրանցից մէկը նոյն իսկ նա է, որ այնտեղ ես ապացոյցներ եմ բերում, որ արտահանման պակասելը ամենևին այն տնտեսական նշանակութիւնը չունի, ինչ ընդհանրապէս կարծում են։ Ցորենի առևտուրի ժողովրդական տնտեսական նշանակութիւնը շատ նսեմացած կը լինի, եթէ ամբողջ խնդիրը քանակութեան խնդրի վերածէինք։ Հաւատացնում եմ, որ եթէ խնդիրը իմ աչքում ևս դրանում լինէր, այսքան երկար ժամանակ չէի կորցնի նրան ուսումնասիրելու համար։ Բայց ցորենի արտահանման խնդիրը իմ աչքում կապված է մի այնպիսի արմատական փոփոխութեան հետ մեր գիւղական կեանքի մէջ, որ նրա նմանը դրտնելու համար հարկաւոր է այլ ևս չը դիտեմ մեր երկրի անցեալի որ հեռաւոր դարին դիմենք։ Այո, այդ աննշան բանը նշանաւոր բան է. աչք է պահանջվում տնտղելու համար։

Պ. Դ. Ն., որպէս և Թիֆլիսի ըստ իս ամենահամակրելի գործիչներից մէկը, նա ինքը, որ «Нов. Обозрѣніе»-ի առաջնորդողներից մէկում իմ ուսումնասիրած առարկայի առիթով այնքան սկեպտիական հայացքներ էր յայտնում, վախենում է, որ երկրագործութեան ծաւալի ընդլայնելուց, մի գուցէ Ջնասվի միւս, աւելի թանկագին բոյսերի մշակութիւնը մեր երկրում։ Բայց, 'ի սէր Աստուծու, մթթէ գիւղացին այն տխմար արարածն է, որ այնտեղ, որտեղ նրան ձեռնտու է բամբակ, թութուն, գենագերչագ և այլ ևս չը դիտեմ ինչ տեխնիական բոյսեր մշակել, նա, այդ գիւղացին, սկսէ ցորեն և գարի ցանել։ Ցորեն-գարի կը ցանվեն միմիայն որտեղ ձեռնտու է անել։ Հակառակ կերպով վարվելու համար դեռ բաւական չէ, որ ես այդ բանը ցանկամ, քանի որ դրա համար ոչ թէ իմ, այլ մինչև անգամ տէրութեան ցանկութիւնն էլ անզօր բան կը լինէր։ Եւ վերջապէս, այդ որտեղ եմ ես այդպիսի ցանկութիւններ յայտնել։ Ոչ «Մշակում» տպված յօդուածներիս մէջ և ոչ 30-ին դեկտեմբերի կարդացած և պ. Դ. Ն-ին անյայտ զեկուցմանս մէջ։ Այս վերջինում ես միայն ասել եմ՝ ցորենի և գարու գները բարձրացել են, ուրեմն երկրագործութեան ծաւալը պէտք է ընդլայնի և ապացոյցներ եմ բերում, թէ ինչու այժմեայ բարձր գները այլ ևս երբէք չը պիտի ընկնեն գների նախկին ստոր աստիճանի վրա։ Ակներև է, որ ես ներկայացնում եմ այդ շարժումը որպէս մի բնական հոսանք և ոչ իբրև հետևանք տէրութեան միջամտութեան։

հասարակ թղթերը, որոնք կպցրած էին այդ ձողերի վրա։ Վերին ծայրի թերթի վրա արեգակի լոյսը, որ անցնում էր պատի և դրսի կողմից դրած ճեղքի միջով, կազմել էր մի կանոնաւոր եռանկիւնի։ Դրան էր նայում Սօֆին։

Իր կեանքում օրիորդը չատ անգամ էր այդպիսի հետաքրքրութեամբ դիտել այդ եռանկիւնին։ Նա չէր մոռացել թէ որպիսի ուրախութիւն էր պատճառում նա իրան, երբ դեռ փոքր երեխայ էր։ Առաւօտեան արևը ծագելուն պէս փոքրիկ եռանկիւնին իսկոյն աւետում էր այդ տան բնակիչներին ձմեռնային պայծառ օր։ Շատ քիչերին այնքան կուրախացնէր այդ արեգակը, որպէս Սօֆին։ Սա իսկոյն կը մտաբերէր թէ բակի որ կողմումն է ձիւնը շատ սկսվում հալվել. և մինչդեռ տաք քուրսու տակ պառկած էր, մտքում ծրագրում էր թէ ինչ տեսակ տուն կամ մարդ պիտի չինէ ահագին փայտէ թիով, որ նա մեծ դժուարութեամբ էր դեռնից բարձրացնում։ Եթէ կիրակի էր լինում, նրա հայրը նստում էր չէմքի մօտ ընկած քարի իրա, նայում էր իր աղջկայ աշխատանքին, երբեմն ցոյց էր տալիս թէ ինչպէս պէտք է անել, որ թիի վրա շատ ձիւն չը կպչի և ծանրացնէ, կամ թէ ինչ ձև պէտք է տալ նորակառոյց տան կտուրին։ Արեգակը մայր էր մտնում, Սօֆին կրակ ընկած ձեռքերով ու դէմքով տուն էր վազում. մայրը հասկացնում էր որ ձիւնն է այդպէս այրում նրա կաշին. իսկ երբ նա չը բաւականանալով այդ բացատրութեամբ, սկսում էր ցաւից լաց լինել, մայրը անիծում էր, յայտնելով իր զարմանքը, թէ ինչպէս է նա աղջիկ ծնվել, երբ այդքան դերի է տղայական խաղերի։ Բայց հայրը լուռ էր մնում։

Այժմ Սօֆին մեծացած աղջիկ էր, այժմ չը կար հայրը, և միայն այս բանը որքան սաստիկ նեղում էր նրա սիրտը։ Շաբթի մեծ մասը նա մենակ տանն էր լինում. մայրը ուրիշների համար բան անելով էր մի քանի կօպէկ աշխատում և երկուսին էլ կերակրում։ Իսկ չորեքշնի հոգսը իրան, օրիորդի, վրա էր. նրա արած գործերը այնքան օգուտ էին տալիս, որ նա մերկ չէր մնում։ Այժմ տխուր է ձմեռվայ օրը. Սօֆիի գլուխը ցաւում էր. ինչպէս անքուն մնացած մարդ յաճախ յօրանջում էր։ Իսկ պատուհանի եռանկիւնուն նայում էր ոչ թէ մի ուրիշ մտքով, այլ միայն իմանալու համար թէ արդեօք արեգակը բաւական բարձրացել է, որ նա կարողանայ կտուրը վեր ելնել և ձիւնը սրբել։

Եռանկիւնին վերջապէս չատ լայնացաւ և կորցրեց իր կանոնաւոր ձեր։ Սօֆին վեր կացաւ որ դուրս գնայ, բայց այդ րոպէին ներս մտաւ նրա մայրը, որ մի կողմ դցելով ձեռքում բռնած շորը, ասաց չտապով.

—Հաւաքիր, սարքիր տունը, այս րոպէիս լսեցի, որ մի քանի կանայք պիտի գան։ Շուտ արա, մաքուր աւելիր։

Սօֆին կարծես չատ անգամ էր լսել այդ խօսքերը և չատ լաւ գիտէր թէ ովքեր պիտի գային, ուստի ոչինչ չը պատասխանեց, անցաւ տան մի անկիւնը և բաւական դանդաղ կերպով սկսեց կարգի դնել տան իրերը։ Որքան որ մայրը վռազեցնում էր, այնքան նա ծանր էր շարժվում։ Շատ անբաւականի էր նման։ Բայց և այդպէս, կարողացաւ իստակել տունը, հաւաքել, սարքել։

Կէսօրից մօտ ներս մտան երեք կանայք, որոնք լաւ հագնված էին և բաւական խրոխտ դէմքեր ունէին։ Սովորական ողջոյնից յետոյ նրանք ըսկսեցին տան բոլոր կողմերը դիտել և երբեմն միմեանց ականջին ծածուկ խօսքեր փսփսալ։ Ցանտիկինը կարծեց թէ նրանք ծաղրում են իր աղքատիկ տան դարդերը և չը գիտէր թէ ինչ անի։ Մի քանի րոպէից յետոյ միայն իմացաւ, որ այցեելուները կանգնած են մնացել. մի քանի անգամ ինդրեց նստել, բայց նրանք չը նստեցին, մինչև որ տանտիկինը ամեն մէկի թեից բռնեց, նստացրեց քուրսու մօտ. իսկ ինքը կանգնած մնաց։

Խօսակցութիւնը սկզբում անհետաքրքիր առարկայի վրա էր և ըստ երևոյթին շատ անհաճելի էր թւում այցելուներից մէկին, որ նստած էր վերի կողմում և ամենից շատ հպարտ էր պահում իրան։ Դա մի կարմրերես կին էր, որ կարծես ամենքի մօտ հպարտանալու մտքով, շուտ շուտ ձեռքը տանում էր դէպի ճակատը իբրև թէ այդտեղի վրա կուտած երկու շարք պօլիմպերիալները դրստելու համար։ Նրան լաւ ճանաչում էր Աննամանը, գիտէր ինչ «բախտաւոր էր»։ Այդ «ճաքվածի»-ի ամուսինը մանրավաճառ էր և միշտ կատարում էր նրա պահանջները. այնպէս որ, ինչպէս ինքը, այդ կինն ասաց, շուտով երկու շարք պօլիմպերիալին պիտի աւելանար երրորդ շարը, իսկ այտերի վրայով մինչև ծնօտը դրած արծաթի խոշոր զարդերը պիտի ոսկի դառնային։ Դա Աստուածատուրի քոյրն էր։

Զանձրացած իր երկու ընկերուհիների սկսած խօսակցութեամբ, այդ կինը մի քանի անգամ աչքերը հպարտութեամբ դէս ու դէն շուռ տալով ասաց մի հպարտ և վիրաւորական ձայնով.

—Լաւ է, լաւ, մենք մասլահաթի չենք եկել։

Խօսակցութիւնը փոխվեց։ Այցելուները յայտնեցին Աննամանին, որ իրանք նշանախօսութեան են եկել, Սօֆիին ուզում են Աստուածատուրի համար։

Աննամանը, որ նոր էր նստել քուրսու ներքին ծայրում, այդ խօսքերին ոչինչ չը պատասխանեց, այլ սկսեց մատով քուրսու կապերտի վրա դէս ու դէն տանել մի բրինձի հատիկը, որ յայտնի չէ թէ ինչպէս էր մնացել այդտեղ։

—Քո վատութիւնդ ուզողի աչքը դուրս պրծնի, Աննման, խօսեց խնամախօսներից մէկը.—ապրելու տեղ է, լաւ օջախ, տուր, չես փոչմանիլ։

—Մենք ուզում ենք պատճառ դառնալ, աւելացրեց երկրորդը.—այսպիսի ուրախ բանի պատճառ դառնալը վարձք է. էգուց, Տէրը մի արացէ, եթէ մի վատ բան լինի, մեզ ես անէծքաչոր անելու։ Եթէ վատ իմանայինք, պատճառ չէինք դառնալ, հարիւր տարվայ աղ ու հացը վկայ. չես հաւատում։

—Ինչու չէ, վերջապէս, խօսեց Աննամանը, բայց չը թողնելով բրինձի հատիկը և շարունակ իր մատին նայելով։

—Տղան պակասութիւն չունի, արարած աշխարհս դիտէ. ինքն էլ քիչ բանով բաւական է. ասում է ինձ աղջիկն է հարկաւոր, ինչ եմ անում բաժինքը։

—Հօրս տունը, փառք Աստուծոյ, ոչ մէկի տանից պակաս չէ, ասաց Աստուածատուրի քոյրը, դարձեալ նոյն հպարտ հայեացքը այս ու այն կողմը ուղղելով, կարծես կամենալով իմանալ թէ իսկ որ այդ խօսքերը զարմացնում են լսողներին։

—Մայրս է քիչ պառաւել, չի կարողանում ամեն հոգս քաշի. մենք ուզում ենք մի աղջիկ, որ լաւ տնտես լինի և լաւ ծիծ կերած։

—Աննամանը ուզեց պատասխանել, բայց նրան ընդհատեց իրանից մօտ նստած կինը։

—Ինչ խօսք է, Եղիսաբէթ. եթէ մենք Աննամանին կամ Սօֆիին չը ճանաչէինք, քեզ այստեղ կը բերէինք։ Հէնց քո ուզածն այստեղ է։ Աղջիկ չէ, հրեշտակ է. այնպէս տնարար, այնպէս աչքաբաց....

—Երեխայութիւնից ես էլ եմ ճանաչում, ասաց Եղիսաբէթը.—Ինչ պիտի ասեմ. Աստուած տայ իմ ուզածից էլ լաւ լինի, որ հղբայրս օտարութիւնում ուրախ մնայ իր նշանածի սիրով։

(Կը շարունակվի)

Բայց թէ շատ տեղերում ցորեն և գարի մըշակելը աւելի ձեռնտու է գիւղացուն, նոյն իսկ այնպիսի տեղերում, որտեղ կարող են բուսնել և աւելի թանկագին բոյսեր,—այդ մասին Գիւղատնտեսական ընկերութեան նախագահող պ. Ի. Ս. Խատիսեան յայտնեց խմբագրից մտքեր, որոնք ամենքին վճռողական թուեցին, որովհետև նրանք հիմնված էին գիւղական հանգամանքների շատ նուրբ ուսումնասիրութեան վրա։ Դեռ չը մշակված և մեծատարած հողերի նկատմամբ նա յայտնեց այս միտքը, թէ այդպիսի տեղերում թանկագին բոյսեր չեն մշակւում այն պատճառով, որ նրանք պահանջում են մշտական հսկողութիւն, իսկ մշտական հսկողութիւն կարելի է միմիայն երբ այդ հողերի մօտ բնակութիւն լինի. բայց չը մշակված և մեծատարած հողերը բնակութիւն չունեն։ Ուրեմն դեռ նախ պէտք է այդ հողերը բնակեցնել, այգիներով ծաղկացնել և այլն և յետոյ միայն մտածել բամբակ, գենագերչագ, թուտոյ միայն մտածել բամբակ, գենագերչագ, թութուն և այլ բոյսեր մշակելու վրա։ Այդ տեսակ հոգացողութիւններ չէ պահանջում ցորենի և գարու մշակութիւնը և այդ հանգամանքը վճռում է չատ հարցեր, ի միջի այլոց և փարատում է չատերի տարակուսանքները մեր առարկայի վերաբերեալ։

Մի վերջին նկատողութիւն ևս։ Գիւղացին իրը թէ չէ օգտվել հացահատիկի գների բարձրանալուց։ Իմ տեղեկութիւնները հակառակ են պ. Դ. Ն-ի վկայութեան. և Գիւղատնտեսական ընկերութեան անդամներից մի քանիսը ճգնեցին իմ սակնկալութիւնները անհիմն դուրս բերել նոյն նկատողութիւնով։ Կրկնում եմ, որ իմ տեղեկութիւնները այդ վկայութիւններին հակառակ են. բայց բան է, եթէ այդ վկայութիւնները ճիշդ դուրս գան և մենք այն համոզմունքի գանք, որ մեր գիւղացին չէ կարողանում օգտվել Աստուածանից և մարդկանցից ստեղծված բարիքներից չարչիների պատճառով,—մենք մեր կողմից ոչինչ չենք խնայի այդ հարցին տալ ընդհանուր հասարակաց ամենակարևոր հարցերի բնաւորութիւնը, զբաւելով նորա վերա և լրագիրների և Գիւղատնտեսական ընկերութեան և անդամ կառավարչութեան ուշադրութիւնը։ Բայց, մի երրորդ անգամ ևս, այդ իրողութեան մէջ համոզված չեմ։

Ա. Արասխանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Նոր տարվայ առիթով «Մշակի» խմբագիրը ստացաւ զանազան տեղերից շնորհաւորական նամակներ և հեռագիրներ։ Որովհետև մեզ անհնարին է շնորհաւորող բոլոր անձինքներին մասնաւոր նամակներով կամ հեռագիրներով պատասխանել, ուստի խնդրում ենք հեռագիրներ և նամակներ մեզ ուղարկող բոլոր անձանց՝ ներկայ տողերով ընդունել մեր անկեղծ և ի սրտէ շնորհակալութիւնը։

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են, յունվարի 3-ից հետևեալը։ Տաք եղանակներին յաջորդեցին սարսափելի խիստ և ցուրտ քամիներ, որոնք հըրդեհների պատճառ էլ են լինում։ Քամու պատճառով փողոցներում անց ու դարձ անելն էլ անհնարին էր լինում։ Հրդեհները այստեղ յաճախ են պատահում։ Անցեալ ամսի կէսին քաղաքից 7 վերստ հեռաւորութեամբ գտնվող Պաշկովկա ռուսաց գիւղը կատարելապէս այրվեցաւ։ Կրակը ամբողջ գիւղում մի անգամից տարածվեց և լեղուաւոր բոցերը երկինք էին բարձրանում։ Գիւղի մեծ մասը, 400 տուն, բոցերի զոհ դարձաւ։ Ծուխի մէջից անդադար լսվում էին աշխատաւորների աղաղակները և կրակից դուրս բերվող մանուկների սրտաճմլիկ լացի ձայները։ Նահանգապետի կարգադրութեամբ զօրք և հրաշէջ մեքենաներ ուղարկվեցան Պաշկովկա գիւղը թշուառներին չուտափոյթ օգնութիւն հասցնելու համար։ Ամբողջ գիւղը փայտաշէն էր։»

—

Մենք լսում ենք որ ԲԱԳՈՒԻ հայերը հանգանակել են յօգուտ Մարդասիրական ընկերութեան այրված գպրոցի վերաշինութեան՝ արդէն 15,000 ռուբլու գումարից աւելի։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են։ «Մեզանում մարդասպանութիւնը սովորական բան է դարձած. օր չէ անցնում որ չը լսենք թէ այս կամ այն տեղ մարդ են սպանել։ Մի քանի օր առաջ լսեցինք որ Բալախանի ճանապարհի վրա, երկաթուղու կայարանից ոչ հեռու, երեք հայ յարձակվել են իրանց ընկերոջ՝ չորրորդ հայի վրա, խեղդել են նրան և նրա գրպանում գտնված 400 ռուբլին վերցրել են, իսկ դիակը գցելով մօտիկ ջրհորի մէջ, շարունակել են իրանց ճանապարհը։ Բայց յետոյ գաղտնիքը յայտնվեցաւ և յանցաւորները այժմ կալանաւորված են արդէն։»

—

Լսում ենք որ ԹԻՖԼԻՍՈՒՄ ոստիկանութիւնը գտել է կեղծ թղթադրամի գործարան։ Կեղծ թղթադրամ չինելու մէջ մեղադրվողներից երկուսը ձերբակալված են, իսկ միւսները հսկողութեան ներքոյ են դրված։

—

Թիֆլիսը էլէքտրական լուսով լուսաւորելու հարցը նորից հրապարակ է եկել։ Բազմաթիւ ֆիրմաներ և անձինք, թէ Ռուսաստանից և թէ արտասահմանից, ցանկութիւն են յայտնում քաղաքի էլէքտրական լուսաւորութեան գործը վերցնելու, և արդէն չատերը յայտնել են իրանց դիտաւորութիւնը քաղաքային վարչութեանը։

—

Պետերբուրգի լրագիրներին գրում են ՄՈՍԿՎԱՑԻՑ, որ արդէն այնտեղ են եկել Պարսից հասարակական աշխատանքների մինիստրը և բարձր Նորմանն, որոնք դիտաւորութիւն ունեն կազմել մի ընկերութիւն, Պարսկաստանում երկաթուղու գծեր անցկացնելու համար։

—

Պետերբուրգի «Новости» լրագիրը, խօսելով Ռուսաստանի ժողովրդական կրթութեան գործի մասին, ստատիստիական տեղեկութիւններով ցոյց է տալիս, որ Ռուսաստանում ժողովրդական դպրոցների համար չատ և չատ քիչ ծախք է լինում, և նոյն իսկ Պետերբուրգը, որը այդ կողմից առաջին տեղն է բռնում ամբողջ Ռուսաստանում, չորս անգամ պակաս է ծախսում դպրոցների վրա, քան եւրոպական ուրիշ չատ պետութիւնների մայրաքաղաքները։ Լրագիրը ցանկութիւն է յայտնում, որ առանձին ուշադրութիւն դարձնվի այդ կարևոր գործի վրա, որպէս զի «անհետանայ դարերով խոցացած խաւարը։»

—

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը յունվարի 16-ից մինչև 1 փետրվարի նշանակել է հետևեալ տակսա Թիֆլիսի բազարներում, խանութներում և չրջավաճառներով ծախվող ուտելեղէնների վրա։ Կրուպչատկա ալիւրից թխած հացի ֆունտը արժէ 5 կոպ., ցորենի ալիւրից, առաջին տեսակի՝ 3 կոպ. երկրորդ՝ $2^1/_2$ կոպ., նոյն ալիւրից թոնրի մէջ թխած հացի ֆունտը առաջին տեսակի 5 կոպ., երկրորդ $3^1/_2$ կոպ., երրորդ 3 կոպ։ Կրուպչատկա ալիւրից խառն ցորենի ալիւրի հետ թխած լաւաշներ՝ առաջին տեսակի 5 կոպ., երկրորդ 4 կոպ., երրորդ $3^1/_2$ կոպէկ։ Տաւարի միսը առաջին տեսակի՝ 8 կոպ. ֆունտը, երկրորդ՝ 7 կոպ., սուկի 14 կոպ., ոչխարի մսի ֆունտը 8 կոպ., խոզի մսի ֆունտը՝ առաջին տեսակի 7 կոպ., երկրորդ 6 կոպէկ։ Այդ տակսան չէ վերաբերվում զիւղական արդիւնաբերողներին, որոնք բերում ծախում են իրանց արդիւնքները Թիֆլիսի հրապարակների և վաճառանոցների վրա։

—

«Кавказъ» ռուս լրագրի մէջ կարդում ենք. «Դեկտեմբերի 28-ին Երևանի գաւառում գտնվող ԱՐԾՆԻ գիւղում բացվեցաւ ուղղափառ եկեղեցական-ծխական ուսումնարան, որը առաջինն է ամբողջ Երևանի նահանգում։ Բացման օրը ուսումնարան մտան 23 տղայ և 4 աղջիկ։ Ուսումը ձրի է։ Ուսումնարանի բացմանը ներկայ լինելու համար Երևանից եկել էին աւագ քահանայ Գամբարով և գաւառապետ Բեժանբէգով։»

—

Ֆրանսիական մի ընկերութեան կողմից ԹԻՖԼԻՍ են եկել մի քանի ներկայացուցիչներ, որոնք պէտք է տեղեկութիւններ հաւաքեն մեր երկրի գինեգործութեան մասին։ Ֆրանսիական ընկերութիւնը մտադրութիւն ունի մշակելու Կովկասի գինին։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ հայոց դրամատիական ակումբի խմբի առաջիկայ երկու ներկայացումները, որ տեղի կունենան երկուշաբթի, ամսիս 19-ին և հինգշաբթի, ամսիս 22-ին, կը տրվեն Նախկին Արծրունու թատրոնում։ Այնուհետև ներկայացումները կը շարունակվեն Ամարայի թատրոնում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԻԾԸ ԱԻ ԻՇԽԱՆ ԲԻՍՄԱՐԿԻ ՃԱՌԻ

—

Յունվարի 11-ին Գերմանական ռէյխստագում կրկին սկսվեցաւ զինուորական օրինագծի քննութիւնը։ Ժողովի սկզբին յանձնաժողովը պարզեց ռէյխստագին իր հայեցակէտերը կառավարութեան օրինագծի վրա, մեկնելով և այն հիմունքները, որոնց վրա հիմնված յանձնաժողովը մի քանի փոփոխութիւններ մտցրեց օրինագծի մէջ։ Դրանից յետոյ սկսվեցան ճառախօսութիւնները՝ զանազան կուսակցութեան ներկայացուցիչների կողմից։ Ֆելդմարշալ Մօլտկէ խօսեց մի թէև կարճ, բայց ոգևորված ճառ, անպայման պաշտպանելով կառավարութեան օրինագիծը։ Մօլտկէից ուրիշ կարծիք չէր էլ սպասվում։ Մօլտկէից յետոյ մի փոքրիկ ատենաբանութիւն արեց գերմանական ազատամիտների կուսակցութեան մի ներկայացուցիչը, որից յետոյ ոտի կանգնեց իշխան Բիսմարկ, որը վճռել էր այս անգամ վերջ տալ իր լռութեանը։ Ռէյխստագի մէջ տիրեց լռութիւն. Բիսմարկ սկսեց խօսել։ «Դաշնակցական կառավարութիւնները,—ասաց իշխան Բիսմարկ,—իրանց նախագծով այն համոզմունքն են յայտնում, որ Գերմանիայի այժմեան պատերազմական ոյժը բաւական չէ պետութեան սահմանները ապահովութեան մէջ պահելու համար։ Այդ համոզմունքը հիմնված է Գերմանիայի զինուորական հեղինակութիւնների, ավտորիտետների՝ կարծիքների վրա, որոնց ընդունում է ամբողջ Եւրոպան՝ բացի պ.պ. Ռիխտերից, Վինդհորստից և Գրիլլենբերգերից (աղմուկ)։ Մաքսիմ անգամ չեմ կարող անցկացնել որ պատերազմական հարցերում ռէյխստագը կարող է աւելի իրաւասու լինել, քան նոյն ինքն կայսրը և ֆելդմարշալ Մօլտկէ։ Գուցէ ընդդիմադրական կուսակցութիւնը կարծում է, որ մենք ցանկութիւն ունենք պատերազմ սկսելու զանազան երկիրներ նուաճելու դիտաւորութեամբ, կամ թէ գուցէ մեր այս ձգտման և արնելեան հարցի մէջ մի որ և է կապ է տեսնում—կարող ենք ասել, որ այդ բոլոր կասկածները անհիմն են։ Բաւական է միայն յիշել, թէ որպիսի խաղաղասիրական բնաւորութիւն ունէր կայսրի կառավարութիւնը վերջին 26 տարվայ ընթացքում։ Ֆրանկֆուրտի դաշնադրութիւնից յետոյ մեր բոլոր ջանքերը գործ էինք դնում խաղաղութեան պահպանութեան համար, որը անհրաժեշտ էր մեր ներքին զարգացման համար։ Ներկայումս Աւստրո-Ունգարիայի հետ մենք գտնվում ենք ամենաբարեկամական յարաբերութիւնների մէջ։ Մեր յարաբերութիւնները դէպի Ռուսաստանը նոյնն են, ինչ որ էին վերջին պատերազմի ժամանակ։ Մենք Ռուսաստանից թշնամական քաղաքականութիւն անգամ չէինք սպասում։ Այս խօսքերը ասելով, ես գուցէ կորցնում եմ լեհացի պատգամաւորների աջակցութիւնը,—բայց պէտք է ասեմ, որ մեր յարաբերութիւնները դէպի Ռուսաստանը նոյնն են, ինչ որ էին Ալէքսանդր II-ի ժամանակ։ Ֆրանսիայի և Ռուսաստանի դաշնակցութեան լուրերը անհիմն են։ Ռուսաստանի հետ մենք կընդհարվենք այն դէպքում, երբ նրան կը հանդիպենք Բոլգարիայում։ Զարմանալին այն է, որ աղատամիտ լրագիրները, որոնք այժմ յարձակվում են մեր նախագծի վրա, մի քանի ամիս առաջ ամեն ջանք գործ էին դնում որպէս զի կռուեցնեն Գերմանիան Ռուսաստանի հետ։ (Այդ խօսքերը ասելուց յետոյ Բիսմարկ կարդաց մի քանի հատուածներ «Berl. Tagebl.», «Freis. Zeit.» և «Germania»» լրագիրներից)։ Ինչպէս տեսնում էք այս լրագիրները յարձակվում են մեզ վրա այն պատճառով, որ մենք չէինք կամենում կռուել Ռուսաստանի հետ Բոլգարիայի և նրա իշխանի պատճառով։ Այդ ինձ զարմանալի է թւում և յիշեցնում է ինձ Չամլէտի մի տեսարանը՝—«Մեր ինչն է Բոլգարիան....։» Մեզ համար բոլորը մէկ է, թէ ինչ կը պատահի Բոլգարիայի հետ, և թէ ով կը լինի նրա իշխանը։ Ռուսաստանի բարեկամութիւնը մեզ համար աւելի կարևոր է, քան Բոլգարիայի և նրա բոլոր գերմանացի բարեկամների տրամադրութիւնը (աղմուկ)....։ Դժուարութիւնը ոչ թէ մեր դէպի Ռուսաստանը և Աւստրիան ունեցած յարաբերութեան խնդիրն է, այլ դժուարութիւնը այն բանի մէջն է, թէ ինչպէս բարեկամ պահել Ռուսաստանը և Աւստրիան։ Դրանց շահերը միմեանց հակառակ են, մենք աշխատում ենք այդ երկու մեզ բարեկամ պետութիւնների բարեկամութեան համար, թէև գուցէ այդ բանի համար Ռուսաստանում մեզ կը համարեն «աւտրօմօլ», իսկ Աւստրիայում՝ «ռուսամօլ»...։ Մենք աշխատել ենք նոյնպէս հաշտվել Ֆրանսիայի հետ. թէև այդ կողմից մեր ջանքերը չատ էլ արդիւնաւոր չեղան։ Ներկայ օրինագիծը կապ ունի այդ կէտի հետ։ Մեր և Ֆրանսիայի մէջ խաղաղութիւն պահպանելու խնդիրը չատ դժուարին է, քաղաքական յայտնի պատճառներով...։ Մենք պատճառ չունենք յարձակվելու Ֆրանսիայի վրա։ Ես չեմ կարող նախագուշակել Նախախնամութեան տնօրինութիւնը. բայց ես միշտ խոյս կը տամ Ֆրանսիայի հետ պատերազմ ունենալուց։ Այդ պատերազմը անկասկած կը լինի.—բայց թող ուշ լինի. եթէ Ֆրանսիան կը սպասի, որ մենք յարձակվենք.—այդ դէպքում խաղաղութիւնը երբէք չի խախտվի...։ Այն ֆրանսիացիք, որոնք մտադիր են պատերազմելու մեզ հետ, միշտ ծածկում են իրանց այդ ցանկութիւնը յիշելով Գամբետտայի խօսքերը՝ «չը պատերազմել, բայց միշտ խորհել պատերազմի մասին։» Ֆրանսիայում ժողովրդի մի յայտնի դասակարգի մէջ միշտ վառ է մնում պատերազմի կայծը։ Ես լաւ գիտեմ, որ Ֆրանսիական կառավարութեան ղեկավարները ընդդէմ են պատերազմին, սակայն ես երբէք կատարելապէս չեմ կարողանում հաւատալ, որ Ֆրանսիական կառավարութեան և Ֆրանսիական ազգի մի մասը ճշմարիտ բարեկամ է խաղաղութեան։ Ես մինչև անգամ կարծում եմ, որ մենք պատերազմ կունենանք Ֆրանսիայի հետ։ Միայն չը գիտեմ արդեօք այդ պատերազմը մի քանի տարուց յետոյ կը լինի, թէ տասն օրից յետոյ...։ Կրակը ծածկված է մոխրով... և ես այդ դէպքում չեմ կարող բաւականանալ լոկ խօսքերով, որ լսում եմ մեր ներկայացուցիչներից... Տարաբաղդաբար խօսքերը զինուորներ չեն և ամենաճարտարախօս ճառերն անգամ չեն կարող զօրագնդերի տեղը բռնել։ Էլդասը մեր ձեռքն է, և Ֆրանսիացիք կամենում են յետ առնել այդ երկիրը. և մենք պատրաստ պէտք է լինենք Ֆրանսիայի յարձակմանը դիմադրելու համար...։ Ինձ հարցնում են. «միթէ Ֆրանսիայի յարձակումը մի հիմնաւոր առիթ է ներկայ օրինագիծը ռէյխստագին ներկայացնելու համար»։—Արդեօք պարզ է ձեզ համար այդ պատերազմի պատկերը. տեսնում էք դուք թէ ինչ դրութեան մէջ է գտնվում մեր արդիւնաբերական և առևտրական յարաբերութեան գործը։ Ես համոզված եմ, կատարելապէս համոզված եմ, որ Ֆրանսիան իսկոյն կը յարձակվի մեզ վրա, երբ կը զգայ որ ինքը աւելի ուժեղ է քան Գերմանիան։ Այդ իմ խորին համոզմունքս է։ Շատերդ կարծում էք, որ մենք կը յաղթենք։ Այդպէս չեն կարծում մեր գեներալները...

«Այո, պարոններ, Ֆրանսիան կրկնապատկել է իր զօրքը, ազգային ժողովը տալիս է որքան հարկաւոր է փող պատերազմի համար, Ֆրանսիացիք ունեն եռանդ, քաջութիւն, և մենք պէտք է միշտ յիշենք, որ կարող ենք յաղթվել այդ ազգից։ Երևակայում էք ձեզ, թէ ինչ կը լինի այդ ժամանակ մեր դրութիւնը։ Դուք տեսնում էք թէ ինչպէս յաղթող թշնամին ոտք է դնում Բերլինի մէջ, ինչպէս և մենք ոտք դրեցինք Փարիզում։ Այն ժամանակ մենք ստիպված կը լինենք ընդունել յաղթողի բոլոր պայմանները։ Ֆրանսիացիք չեն լաւականանայ Հռենոսով։ Հանդուերեան թագաւորութիւնը կը վերականգնվի. Ֆրանսիան կաշխատի մեզ այնքան թուլացնել, որ մենք բոլորովին ուժասպառ լինենք։ Դրանից յետոյ մենք կը սկսենք մտածել վրէժխնդրութեան մասին՝ և հէնց որ ոյժ կունենանք, էլի պատերազմ կը սկսենք Ֆրանսիայի դէմ, և այդպիսով 1870 թվի պատերազմը համեմատած 1890 թվի պատերազմի հետ, մի երեխայական խաղ կը նմանի միայն... Խնդիրը հասկանալի դրութեան մէջ է.... Դաշնակցական կառավարութիւնը ամեն բան կանի, ցանկացած զօրքը ունենալու համար. 90 տարեկան կայսրը չէ կարող հրաժարվել այն բանից, ինչ որ եղել է իր կեանքի խորհուրդը,—այսինքն ստեղծել զօրք և Գերմանական պետութիւն։ Եթէ դուք կը մերժէք, այն ժամանակ մենք կը խօսենք մի այլ ռէյխստագի հետ»։—Դրանով Բիսմարկ վերջացրեց իր ճառը։ Ճառախօսութիւնները շարունակվեցան. Բիսմարկ ոգևորված կերպով էլի մի քանի անգամ խօսեց։ Յունվարի 14-ի նիստում որոշվեցաւ կառավարչական օրինագծի բաղդը։ 368 պատգամաւորներից 30-ը հրաժարվեցան ձայն տալուց։ Մնացած 338-ից 184 պատգամաւոր կառավարչական օրինագծի դէմ ձայն տուեցին, իսկ 154-ը օրինագծի կողմը անցան։ Հէնց

այդ բոպէին իշխան Բիսմարկ կանգնեց և ասաց. «Պէտք է հաղորդեմ ժողովին կայսերական հրամանը»։ Պատգամաւորները ոտի կանգնեցին։ Բիսմարկ կարդաց հետևեալ տողերը. «Ողորմութեամբ Աստուծոյ, մենք, Վիլհելմ, կայսր Գերմանիայի և թագաւոր Պրուսիայի, սահմանադրութեան հիման վրա, և դաշնակցական խորհրդի համաձայնութեամբ, վճռեցինք՝ լուծել ռէյխստագը»։ Բիսմարկ աւելացրեց. «Բարձրագոյն հրամանի զօրութեամբ, յայտարարում եմ ռէյխստագի նստաշրջանը փակված»։

Նախագահի հրաւէրի համաձայն, պատգամաւորները երեք անգամ կրկնեցին՝ «Կեցցէ կայսր Վիլհելմ շատ տարիներ» խօսքերը և ցրվեցան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան օրգան, Բրիւսելում հրատարակվող «Le Nord» լրագիրը, խօսելով բոլգարական հարցի մասին, անհիմն է համարում այն լուրը, որ իբրև թէ Ռուսաստանը հրաժարվել է Մինգրելիայի իշխանի թեկնածութիւնը պաշտպանելուց։

—Բելգիական կառավարութիւնը միջոցներ է որոնում Բելգիայի սահմանները ամրացնելու համար։

—Լոնդոնից եկած լուրերից երևում է, որ Գըլադստոնի և Չեմբերլինի կուսակցութիւնների մէջ փորձեր են լինում միմեանց մօտենալու և իրլանդական հարցի մասին համաձայնութիւն կայացնելու։ Այդէն մի քանի ժողովներ են եղել իրլանդական վարչութեան նոր կանոնադիրքը կազմելու համար։ Ազատամիտ և արմատական կուսակցութիւնների միանալը մի մեծ հարուած կը լինի Սալսբըրիի կուսակցութեան համար, և այդ պատճառով Սալսբըրի ամենայն ուշադրութեամբ հետևում է այդ ուժգին հակա-մինիստրական շարժմանը։

—Իշխան Ալէքսանդր Բատենբերգի այժմեան ճանապարհորդութիւնը և այդ ճանապարհորդութեան ուղղութիւնը զանազան տեսակ ենթադրութիւնների առիթ է տալիս։ Եւրոպական յայտնի տեսակի լրագիները ամեն տեսակ բաներ են պատմում Բատենբերգի ունեցած նպատակների մասին, յայտնելով, որ նա լինելու է կամ անգլիական զօրքերի հրամանատար Եգիպտոսում, և կամ նոյն անգլիական զօրքերի առաջնորդ Աղանիստանում։

—Սպանիան ևս ամենայն ջանք գործ է դնում իր պատերազմական ոյժերը մեծացնելու համար, և արդէն նաւատորմի մէջ մեծ փոփոխութիւններ են մտցրած։

—Լոնդոնից եկած լուրերից երևում է, որ բոլգարական կառավարութիւնը Լոնդոնում 800 հազար ֆունտ ստերլինգի փոխառութիւն է արել։

—Փարիզից հեռագրում են, որ Ցանկով ձերբակալվեցաւ Բուրգաստում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նորերումս Վիէննայի համալսարանի վերատեսուչը յայտարարեց, որ ուսանողներին արգելվում է իրանց հետ շուն մանածել։ Այդ յայտարարութիւնից մի քանի օր անցած, մի ուսանող եկաւ համալսարան մի կատուի հետ, որին բերում էր ետևից, շղթայով կապած։ Սպասաւորը զարմացած այդ բանի վրա, ուզում էր արգելել ուսանողին ներս մտնել կատուի հետ, բայց ուսանողը նկատեց նրան, որ այդ մասին վերատեսչի յայտարարութեան մէջ ոչինչ չէ ասված։ Մինչդեռ սպասաւորը գնաց այդ մասին յայտնելու վերատեսչին, ուսանողը իր կատուի հետ մտաւ ընդունարան-դահլիճը.... Բարձրացաւ ընդհանուր ծիծաղ.... Երկար զուարճանալուց յետոյ, ուսանողը ինքը յօժարակամ հրաժարվեցաւ իր ուղեկցից....

* * *

Ամերիկայում հրատարակվում է մի ամսագիր պատանիների համար, «St. Nicolas» անունով. այդ ամսագիրը ամենատարածված մի ամսագիր է։ Ներկայ թվականի յունվարի 1-ից, նիւ-Յորկացի երիտասարդ դպրոց օրիորդ՝ Մէն-Դոդի նշանակվեցաւ այդ ամսագրի խմբագիր, տարեկան տասն հազար բուբլի ռոճիկով։

* * *

Իտալիայի Յեղենա քաղաքում, մի հարուստ տիկին, իր հաշուով հիմնեց մի գիւղատնտեսական օրիորդական դպրոց, որտեղ աղջիկները պէտք է սովորեն և վարժվեն տնտեսական պարապմունքների մէջ։ Դպրոցը կունենայ բուն գործնական ուղղութիւն, և պէտք է պատրաստէ դեղջուկների համար հմուտ և գործող կանայք։

* * *

Գերմանական ռէյխստագի վերջին նիստերը և իշխան Բիսմարկի ճառը ու ստացած պատասխանները այնքան աղմկալի և հետաքրքիր էին, որ եւրոպական լրագիրները ամենայն մանրամասնութեամբ նկարագրեցին այդ ժողովների թէ ներքին և թէ արտաքին դրութիւնը։ Ահա թէ ինչ են գրում գերմանական լրագիրները հէնց իրան «երկաթէ կանցլերի» մասին. «Իշխան Բիսմարկ, ռէյխստագը եկած ժամանակ, ինչպէս միշտ, հագել էր կիրասիրի համազգեստ։ Նրա գլուխը համարեա բոլորովին ճաղատ է, և շրջապատված է միայն մի քանի սպիտակ մազերով։ Գլխի ճաղատ լինելու պատճառով աչքի են ընկնում նրա խիտ յօնքերը։ Նրա ամբողջ մարմինը արտայայտում է եռանդ. իսկ գունատ դէմքը՝ լարված մտաւոր դրութիւն։ Բիսմարկի ճառերը կարդացողները, Եւրոպայում այսքան աղմուկ հանող այդ մարդու ատենաբանութիւններով հետաքրքրվողները անկասկած մեծ ուրախութեամբ կը ցանկանային լսել Բիսմարկի ճառերը։ Բայց այնքան էլ հաճելի չէ լսել Բիսմարկին, երբ նա խօսում է։ Ուրիշ բան է, երբ մարդ կարդում է նրա ճառերը։ Երբ Բիսմարկ խօսում է, նա շարժվում է ամբողջ մարմնով. նա համարեա օրօրվում է. ձեռքերի մէջ կատաղի կերպով պտտեցնում է մատիտ. խօսելիս, կամ յանկարծակի դուրս է թռցնում բերանից բառերը, կամ ասում է շատ ծանր և շատ երկար մտածելուց յետոյ։ Բիսմարկի բարակ ձայնը բոլորովին չէ համապատասխանում նրա բարձր հասակին։ Նա խօսելիս շատ է մտածում թէ ինչ բառ գործ դնի, որովհետև, ինքն գիտէ, որ Եւրոպայի առաջ պատասխանատու է իր ասածների համար։ Զարմանալին այն է, որ երբ Բիսմարկ խօսում է Ռիխտերի և Վինդհորստի մասին, միշտ զրգռվում է, և ծածկելով իր գրգռմունքը, ուրեմն հնգնական կերպով է յարձակվում նրանց վրա։ Եւ եթէ Ռիխտեր և Վինդհորստ նոյնպէս հեգնութեամբ են պատասխանում, Բիսմարկ կատաղում է....

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 14 յունվարի։ «Times» հաղորդում է, որ յունվարի 11-23-ին անգլիացիք թողեցին Համիլտոն նաւահանգիստը։

ՄԻԼԱՆ, 14 յունվարի։ Իշխան Ալէքսանդր Բատենբերգ այստեղից ճանապարհ ընկաւ դէպի Ջենովա։

ԲԵՐԼԻՆ, 14 յունվարի «Reichstagsblatt»-ի մէջ տպված է՝ կայսերական հրաման, յունվարի 14-ից, որով արգելվում է, մինչև նոր կարգադրութիւն անելը, բոլոր սահմաններում՝ դէպի օտար պետութիւնները ձիեր դուրս տանելը։ Նոյն հրամանով պետական կանցլերին լիազորութիւն է տրվում արգելումների գործադրութիւնը դադարեցնել, և հարկաւոր դէպքում միջոցներ ձեռք առնել վերահսկողութեան վերաբերմամբ։ Ցիչեալ հրամանը գործադրութեան մէջ է մտել այժմեանից։

ԽԱՐԿՈՎ, 15 յունվարի։ Ցօնավաճառը օրից օր կենդանանում է, անդադար բերվում է ապրանք և գալիս են մարդիկ. վճարումները մինչև այժմ կատարվում են կանոնաւոր կերպով։ Լաւ են վաճառվում ուտելեղէնները և խմիչքները, իսկ մանուֆակտուրային ապրանքը միջակ կերպով։ Ցօնավաճառը երկարատև կը լինի։

ԼՕՆԴՕՆ, 15 յունվարի։ Այսօր պարլամենտի բացման ժամանակ կարդացված գահական ճառում, մատնանիշ է անվում ամենից առաջ այն բանի վրա, որ Անգլիան գտնվում է բարեկամական յարաբերութիւնների մէջ բոլոր պետութիւնների հետ։ Գահական ճառի մէջ ասված է. «Եւրոպայի հարաւ-արևելքում գործերը դեռ չեն վերջացրած. բայց ես չեմ կարծում, որ այնտեղ դեռ չը վճռված հարցերից եւրոպական խաղաղութեան համար մի որ և իցէ վտանգ կարողանայ ծագել։ Թէև ես ցաւում եմ որ տեղի ունեցան այնպիսի անցքեր, որոնք ստիպեցին իշխան Բատենբերգին ձեռք վերցնել Բոլգարիայի կառավարութիւնից, բայց ես անկողմնակալարար համարեցի խառնվել այն գործերի մէջ, որոնք վերաբերում են նրա յաջորդի ընտրութեանը, մինչև այն ժամանակ, երբ կը հասնի այն բոպէն, երբ հարկաւոր կը լինի իմ համաձայնութիւնը, հիմված Բերլինի դաշնագրի վճիռների վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի։ «Новости» լրագիրը հաղորդում է, որ ֆինանսների և պետական կալուածների մինիստրութիւնները մշակում են առանձին տեսչութիւն կազմելու մի նախագիծ, որը պէտք է հսկի հացահատիկների առևտրի կանոնաւորութեան գործի վրա։

ՊԵՏՏ, 15 յունվարի։ Պատգամաւորների ժողովում, Տիսա, պատասխանելով ընդդիմադրական կուսակցութեանը, յայտնեց որ Ռնգարիայում ոչ ոք Ռուսաստանի հետ պատերազմ ունենալ չէ ցանկանում. այդ խօսքերը ընդունվեցան համակրական նշաններով։

ՀՌՕՄ, 15 յունվարի։ Այն լուրի առիթով, որ Աբիսինիայի փոխ-թագաւորը Բաս-Ալուլա պատրաստվում է ռմբակոծել իտալական զօրագունդը Մասսօվօում, Բօքիան յայտարարեց սենատում, որ Աֆրիկայի մէջ զօրքի դրութիւնը վտանգաւոր չէ, բայց յամենայն դէպս օգնութիւն ուղարկված է Մասսօվօ։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

12—100

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисѣ (Графская ул., противъ Музея).

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ (Գրաֆսկայա փողոց, Մուզէյի դիմաց)։

Ստացված է՝ Մալց-Էքսարակտ և հաղի համար կօնֆեկտներ՝ «Մի հաղիր»։ Ձկան իւղ՝ մաքրած և ոչ-մաքուր. Պրօվանսի ձէթ, քացախի էսէնցիա, բուսական ձէթ, ԲԵՐԹԵՐԻ ԱՄԵՆԱԼԱՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕՍԼԱՑ, լեղակ՝ փոշիով և գունտերով. բծեր հանելու դեղեր, կօշիկների և վէճեվեդական գրեֆսբի առաջին ցիրմացի լուցկի, և ամտեսութեան ուրիշ պարագաներ։ Լէնգիլի թխտենու բալզամը. թխտենու կրէմ. Էմուլսիա և Էնգլանտի կօսմետիկան սրբիչներ, երեսի և մարթու թարմութիւնը պահպանելու համար։ Կինոնէնի Էլէօպատ մազերը պնդացնելու համար։

Դեղատան ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ, ԹԻՖԼԻՍՈՒՄ, և ԲԱԳՈՒՄ նրա բաժանմունքում։

„ԱՐԱՐԱՏ“
ԱՄՍԱԳԻՐ

Կը հրատարակվի ամիսը մի անգամ։ բաժանորդագրութիւնը տարեկան է և ընկալվում է յունվար ամսից. բաժանորդագրվողներ՝ Ռուսաստանում՝ 4 բուբլի. Տաճկաստանում, Պարսկաստանում և Եւրոպայում՝ 5 բուբլի, Հնդկաստանում 6 բուբլի։

Հասցէն, Эчміадзинъ, типогр. комитетъ. 2—2

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Հինգշաբթի, 22 յունվարի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ CAMBODGE (ԿԱՄԲՕԶ) նաւապետ CAMOIN (ԿԱՄՈՒԷՆ) դէպի Կ. Պոլիս և Զմիւռնիա և յարակցելով Եաֆա, Պօրտ-Սայիդ և Ալէքսանդրիա գնացող ընկերութեան շոգենաւերի հետ։

Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ և ԲԱԳՈՒ պ. պ. ԲՈՒՐԿՀԱՐԴԻ և ԸՆԿ. իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՐԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑԻ։ 2—3

Մի հայ ՕՐԻՈՐԴ, որ աւարտել է իր ուսումը Դայիանեան դպրոցում, ցանկանում է մասնաւոր տներում դասեր տալ։ Հասցէն „ՄՇԱԿԻ“ խմբագրատանը։

ԿՕՖԷ ՄՕԿԿՕ

Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.

(Ц. 4907) 45—50 (2)

ԲԱՐՕՆ ՖՕՆ-ԿՈՒՉԵՆԲԱԽԻ
ԱՊԱԿՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԸ
Պատրաստում է ամենանոր սիստեմայի
ԼԱՄՊԱՅԻ ԱՊԱԿԻՆԵՐ

Նոյնպէս և լամպայի ուրիշ պարագաները, էժանացրած գներով։ Մանրամասնութիւնները կարելի է իմանալ Սիմէոս և Գալսկէ գործակալութեան գրասենեակի մէջ, Թիֆլիսում։ 2—10 (Ի. շ.)

„ДОНСКАЯ ПЧЕЛА“
годъ (XII)

Какъ и въ теченіи минувшихъ одинадцати лѣтъ, будетъ выходить два раза въ недѣлю, по четвергамъ и воскресеньямъ.

Цѣль газеты—служеніе интересамъ Приазовскаго края: разработка вопросовъ, касающихся экономической жизни этого края, своевременное обсужденіе всѣхъ явленій, имѣющихъ близкое соприкосновеніе съ мѣстной жизнью, оглашеніе болѣе или менѣе важныхъ событій, текущія явленія и мѣстныя новости.

Жизнь окружающихъ городовъ и другихъ сосѣднихъ мѣстностей—въ „Донской Пчелѣ“ имѣетъ всегда обширное мѣсто.

Торговый отдѣлъ „Донской Пчелы“, въ которомъ помѣщаются коммерческія свѣдѣнія, доведенъ до самыхъ широкихъ размѣровъ. Онъ особенно важенъ для всего торговаго міра Кубанской, Донской, Терской областей, Екатеринославской, Воронежской и Ставропольской губерній, гдѣ „Донская Пчела“ уже успѣла получить достаточную популярность, какъ необходимое подспорье для торговыхъ сдѣлокъ.

Подписная цѣна:

Съ доставкою въ Ростовѣ на-Дону.		Съ пересылкою иногороднимъ.	
на годъ	6 р. —	на годъ	7 р.
„ полгода	3 „ 50	„ полгода	4 „ —
„ 3 мѣсяца	2 „ —	„ 3 мѣсяца	2 „ 50

За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.

Письма и деньги адресуются исключительно въ контору редакціи „Донской Пчелы“, въ Ростовъ на-Дону.

Редакція покорнѣйше проситъ Гг. иногороднихъ подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полные адресы четко и разборчиво.

ПРЕМІЯ. Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 20-го Декабря сего 1886 года подписныя деньги за 1887 годъ, будетъ разосланъ БЕЗПЛАТНО Донско-Азовской русско-армянскій календарь на 1887 годъ, въ которомъ, кромѣ общекалендарныхъ многочисленныхъ свѣдѣній, помѣщены также „Нахичеванъ на-Дону, его прошлое и настоящее“, съ литографированнымъ схематическимъ планомъ города, полнымъ Адресъ-календаремъ городовъ: Ростова, Нахичевана, Таганрога, Новочеркаска, Маріуполя и проч. и проч.

Редакторъ-Издатель И. А. Тер-Абраміанъ.

ՆՈՐ ԳԻՐՔ. (ՌՈՒՍԵՐԷՆ ԼԻԶՈՒՈՎ)

ՀՈՂԱՑԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՀԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ Ս. Բահաթրեանի. 1 հատորեան։ Գինը 35 կ։ Թիֆլիսի գրավաճառանոցներում։ 10 աւելի առնողներին 20% զիջումն կը լինի կենտրոնական գրավաճառանոցում։ 12—30

Բացելով Բաղուայ մէջ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ, ընդունում ենք հայերէն գրքեր կոմիսիայով վաճառելու համար։ Պայմանների որոշելը թողնում ենք հրատարակիչների և հեղինակների ազատ կամքին։ Մեր հասցէն. Баку. Книжный Магазинъ Тараевыхъ. 2—4

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԼՍԱՐԱՆԻ նախկին մի ՈՒՍԱՆՈՂ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ ունենալ։ Պատրաստում է աշակերտներ և աշակերտուհիներ հայոց ուսումնարանների համար։ Կարող է սովորեցնել նոյնպէս ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ և ՁԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ։ Հասցէն իմանալ „Մշակի“ խմբագրատանը։ 4—5

Дозволено цензурою, Тифлисъ 16 Января 1886 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у. д. каз.